



Հաստատված է

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական  
կենտրոնի խորհրդի 24.06.2013թ. № 7-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**(AMICUS CURIAE)**

**№ 07-13-Ա**

ք. Երևան

24.06.2013թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Զոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով նշված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

**Հարցի կարևորությունը.**

Վերոնշյալ գործով դիմողի կողմից վիճարկվել է իրավական բացի՝ անձի կրած ոչ նյութական (բարոյական) վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (ՀՀ օրենսդրության մեջ) բացակայության սահմանադրականությունը:

Բարոյական վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտը համարվում է քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից

մեկը, որն իր արտահայտությունն է գտել բազմաթիվ զարգացած երկրների օրենսդրություններում: Այս ինստիտուտի կարևորությունը կայանում է նրանում, որ քաղաքակիրթ հասարակությունում պետք է պաշտպանված լինեն ոչ միայն նյութական բարիքները, այլ նաև քաղաքացու ներքին հավասարակշռվածությունը՝ հոգեկան կայունությունը և ֆիզիկական բնականոն վիճակը<sup>1</sup>:

Դիմողների պնդմամբ վերոնշյալ գործում բարձրացված իրավական խնդրի կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ օրենսդրությամբ ոչ նյութական վնասի դիմաց դրամական փոխհատուցում ստանալու հնարավորության բացակայությունն անձին զրկում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքներից, ինչն էլ հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ և 13-րդ հոդվածների խախտման: Նման իրավակարգավորման բացակայությունը կարող է հանգեցնել նաև Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի, որոշ հանգամանքների առկայության դեպքում՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտման:

**Միջամտության (մեկնաբանությունների) շրջանակը.**

Սույն միջամտության շրջանակում Կենտրոնն անդրադարձ է կատարելու հետևյալ իրավական հարցադրումներին.

- *ի՞նչ հիմքերով և ո՞ր դեպքերում է ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու հետազոտել և գնահատել օրենսդրական բացերի սահմանադրականությունը,*

- *արդյո՞ք այն դեպքերում, երբ օրենսդրական բացի արդյունքում վիճարկվող նորմն իրավակիրառական պրակտիկայում ստանում է այնպիսի մեկնաբանություն ու կիրառում, որով խախտվում է անձի կոնկրետ սահմանադրական իրավունքը, նպատկահարմար է վիճարկվող իրավանորմն անմիջապես ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահից անվավեր ճանաչելը,*

- *արդյո՞ք վիճարկվող իրավանորմը սահմանափակում է (խախտում է) անձի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով,*

- *ի՞նչն է համարվում ոչ նյութական (բարոյական) վնաս, որո՞նք են դրա դրամական փոխհատուցման հիմքերը և ինչպե՞ս կարելի է հաշվարկել*

<sup>1</sup> **Հովհաննես Մանուկյան**, Բարոյական վնասի ինստիտուտի ներմուծումը անհրաժեշտություն է, Օրենք և իրականություն, 01.01.2002:

*հատուցման ենթակա գումարի չափը:*

**I. Օրենսդրական բացը՝ որպես սահմանադրական դատարանի հետազոտման և գնահատման օբյեկտ.**

1. Սույն հետազոտությամբ Կենտրոնը նախևառաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրենսդրական բացերի հիմնախնդրին սահմանադրական արդարադատության պրակտիկայում՝ հիմք ընդունելով թեմայի վերաբերյալ «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության<sup>2</sup> 2008 թվականի հունիսին կայացած 14-րդ վեհաժողովի գլխավոր զեկույցը<sup>3</sup> (այսուհետ՝ Ջեկույց):

2. Այսպես, օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու տեսանկյունից եվրոպական երկրների սահմանադրական դատարանները կարելի է պայմանականորեն խմբավորել հետևյալ կերպ՝

- սահմանադրական դատարաններ, որոնք չեն հետազոտում և գնահատում օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ չունենալով իրավագործություն<sup>4</sup>,
- սահմանադրական դատարաններ, որոնք հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ ունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ,
- սահմանադրական դատարաններ, որոնք հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ չունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ<sup>5</sup>:

<sup>2</sup> ՀՀ սահմանադրական դատարանը լիիրավ անդամ է:

<sup>3</sup> Ջեկույցը պատրաստված է 36 երկրների՝ Ալբանիայի, Ավստրիայի, Ադրբեջանի, Բելառուսի, Բելգիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Դանիայի, Էստոնիայի, Թուրքիայի, Իռլանդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Լյուքսեմբուրգի, Խորվաթիայի, Կիպրոսի, Հունգարիայի, Հայաստանի Հանրապետության, Մակեդոնիայի, Սլովակիայի, Մոնտենեգրոյի, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Չեխիայի Հանրապետության, Պորտուգալիայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Սերբիայի, Սլովենիայի, Վրաստանի, Ուկրաինայի և Ֆրանսիայի սահմանադրական դատարանների կամ համարժեք մարմինների տրամադրած տվյալների հիման վրա:

<sup>4</sup> Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Դանիա, Իռլանդիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Կիպրոս, Նորվեգիա և Վրաստան (Ջեկույց, էջ 31)

<sup>5</sup> Եվրոպական երկրներից միայն Պորտուգալիայի Սահմանադրությունն է ամրագրել սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման լիազորությունը (հոդված 283 (1)):

3. Մի շարք եվրոպական պետություններում, օրինակ՝ Գերմանիայում, Էստոնիայում, Հունգարիայում և Սլովենիայում սահմանադրական դատարանների՝ օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու լիազորություններն ամրագրված են սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում<sup>6</sup>:

4. Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն սահմանադրական դատարանները, որոնք, չունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ, այնուհանդերձ հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ հիմնավորելով այդպիսի լիազորության քողարկված (implicit) առկայությունն իրավական համակարգում Սահմանադրության գերակայությամբ<sup>7</sup>:

5. Հատկանշական է սակայն, որ այդ սահմանադրական դատարանները՝ որպես կանոն, սահմանափակվում են այսպես կոչված «մասնակի կամ հարաբերական իրավական բացի» սահմանադրականության հետազոտմամբ և գնահատմամբ<sup>8</sup>:

6. Մասնավորապես, Լեհաստանի սահմանադրական տրիբունալն ընդգծում է, որ ընդունելի չէ սահմանադրական վերահսկողություն իրականացնել բացարձակ օրենսդրական բացերի դեպքում, այսինքն՝ այն դեպքերում, երբ բացարձակապես չկա որևէ կարգավորում<sup>9</sup>: Համանման կերպով Թուրքիայի սահմանադրական դատարանը նշում է, որ հասկացողությունից վեր է իրավական կարգավորման բացակայությունը սահմանադրական վերահսկողության առարկա դիտելը<sup>10</sup>:

7. ՀՀ Սահմանադրության և սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում կամ այլ իրավական ակտում նույնպես բացահայտ (explicit) կերպով չեն նախատեսվում օրենքներում և մյուս իրավական ակտերում թույլ տրված իրավական կարգավորման բացերը հետազոտելու և գնահատելու՝ սահմանադրական դատարանի

<sup>6</sup> Ձեկույց, էջ 34

<sup>7</sup> Ավստրիա, Իսպանիա, Իտալիա, Լիտվա, Լեհաստան, Շվեյցարիա, Ռումինիա, Թուրքիա և այլ երկրներ (Ձեկույց, էջ 26)

<sup>8</sup> Առկա է մասնակի կամ հարաբերական իրավական բաց այն դեպքում, երբ տվյալ հարաբերությունը կարգավորող իրավանորմը գոյություն ունի, սակայն բավարար չափով որոշակի չէ կամ ամբողջական ձևով չի կարգավորում տվյալ հարաբերությունը:

<sup>9</sup> Ձեկույց, էջ 28

<sup>10</sup> Ձեկույց, էջ 29

լիազորություններ:

8. Այդքանով հանդերձ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայով և «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» կազմակերպության 14-րդ վեհաժողովին ներկայացրած ազգային զեկույցում<sup>11</sup> արտահայտած դիրքորոշմամբ պնդում է, որ ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ հիմք են տալիս ենթադրելու, որ սահմանադրական դատարանն ունի օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման իմպլիցիտ իրավունք:

9. Այսպես, նշված զեկույցի համաձայն, ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, որը Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով փաստորեն հանդիսանում է սահմանադրական արդարադատության հարցերով բարձրագույն դատական ատյանը:

10. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն իր 1-ին հոդվածում սահմանադրական դատարանի կարգավիճակի վերաբերյալ ամրագրում է սկզբունքային դրույթ՝ սահմանելով, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

11. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի<sup>12</sup> համաձայն՝ վերջինս իրականացնում է իր գործունեությունը՝ հիմնվելով գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի վրա, որի էությունը բացահայտվում է հիշյալ օրենքի 19-րդ հոդվածում:

12. Համաձայն նշված հոդվածի՝ գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած

<sup>11</sup> [http://www.concourt.am/armenian/national\\_report/index.htm](http://www.concourt.am/armenian/national_report/index.htm)

<sup>12</sup> Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքները:

ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ պետության մեջ սահմանադրական օրինականության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հարցերում սահմանադրական դատարանի դերի և տեղի նման ընկալումն իմպլիցիտ կերպով հաստատում է օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու իր լիազորությունը:

14. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ նշել է, որ *գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:*

15. Չարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը մեկ այլ՝ 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ գտել է, որ *օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:*

16. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրության մեջ բացերի առկայությունն անմիջականորեն բացասական կերպով է ազդում Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և հիմնական ազատությունների իրացման վրա և խոչընդոտում է իրավական և ժողովրդավարական պետության կայացմանը, Կենտրոնը կարևորում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու լիազորությունը՝ առաջարկելով այն ամրագրել օրենսդրորեն, ինչը հնարավորություն կընձեռի

հատակ նախատեսել սահմանադրական դատարանի կողմից օրենսդրական բացերի հետազոտման և գնահատման սահմանները՝ հաշվի առնելով նաև այն բովանդակային և ձևական (ընթացակարգային) առանձնահատկությունները, որոնք բնորոշ են օրենսդրական բացերի սահմանադրական վերահսկողությանը:

17. Բացի այդ, սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացի սահմանադրականությունը քննության առնելու լիազորությունը յուրօրինակ մեխանիզմ կարող է հանդիսանալ օրենսդրության կատարելագործման համար, քանի որ կոնկրետ փաստական և իրավական հանգամանքներով գործի պարագայում, սահմանադրական դատարանի եզրահանգումը՝ կապված օրենսդրական բացի հետ, օրենսդիր մարմնի համար ուղղակի «ցուցում է» համապատասխան խնդիրը իրավական կարգավորման ենթարկելու համար:

**II. Սահմանադրական դատարանի որոշումներում օրենսդրական բացերի արձանագրման հետևանքները վիճարկվող իրավանորմի վրա.**

18. Այն դեպքերում, երբ օրենսդրական բացի արդյունքում վիճարկվող նորմն իրավակիրառական պրակտիկայում ստանում է այնպիսի մեկնաբանություն ու կիրառում, որով խախտվում է անձի կոնկրետ սահմանադրական իրավունքը, կարևոր է պարզել, թե արդյո՞ք նպատակահարմար է վիճարկվող իրավանորմն անմիջապես սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահից անվավեր ճանաչելը:

19. Եվրոպական մի շարք երկրների<sup>13</sup> սահմանադրական դատարաններ, իրենց որոշումների պատճառաբանական մասում արձանագրելով օրենսդրական բացի առկայությունը, որոշումների եզրափակիչ մասում վիճարկվող դրույթը (դրա հետ փոխկապակցված այլ դրույթներ) ճանաչում են Սահմանադրությանը հակասող՝ չճանաչելով այն անվավեր և սահմանելով որոշակի ժամկետներ, որոնց ընթացքում հակասությունը պետք է վերացվի իրավասու մարմնի կողմից:

20. Օրենսդրական բացի առկայության հիմքով վիճարկվող դրույթը (դրա հետ փոխկապակցված այլ դրույթներ) Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն առաջացնում է մի պարադոքսալ իրավիճակ, երբ միևնույն իրավանորմը հակասում է և չի հակասում Սահմանադրությանը,

<sup>13</sup> Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Գերմանիա, Խորվաթիա, Հունգարիա, Չեխիայի Հանրապետություն, Սլովենիա (Ձեկույց, էջեր 66-67):

անվավեր է և վավեր միննույն ժամանակ: Այլ կերպ ասած՝ իրավանորմը Սահմանադրությանը համապատասխանում է և վավեր է այնքանով, որքանով կարգավորում է որոշակի հարաբերություններ, սակայն միննույն ժամանակ այդ նույն իրավանորմը չի համապատասխանում Սահմանադրությանը և անվավեր է այնքանով, որքանով չի կարգավորում որոշակի այլ հարաբերություններ, որոնք ուղղակի կապի մեջ են գտնվում նույն նորմով կարգավորվող հարաբերությունների հետ:

21. Ավելին, օրենսդրական բացի առկայության հիմքով վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելը հաճախ չի կարող ապահովել անձի իրավունքների իրացումը, քանի դեռ օրենսդրությամբ չի լրացվել առկա իրավակարգավորման բացը:

22. Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելը չի կարող բարոյական վնաս կրած անձի՝ դրամական փոխհատուցման իրավունքը կյանքի կոչել մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից բարոյական վնասի դրամական փոխհատուցման դեպքերի, հիմքերի և չափի վերաբերյալ նորմերի ամրագրումն օրենսդրության մեջ:

23. ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ***իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը***: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ ***«Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»***:

24. Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ վիճարկվող իրավանորմն անմիջապես սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահից անվավեր ճանաչելը նաև հնարավորություն (ժամանակ) չի տա ՀՀ Ազգային ժողովին համալիր ձևով համապատասխան



օրենսդրական կարգավորումներ նախատեսելու, ինչը կարող է հանգեցնել մի այնպիսի իրավիճակի, երբ օրենսդրական բացը լրացնելու կապակցությամբ քայլեր չեն ձեռնարկվի անորոշ ժամանակով<sup>14</sup>, ինչն իր հերթին սպառնալիք է իրավական անվտանգության առումով:

25. Ելնելով վերոնշյալից՝ Կենտրոնն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ օրենսդրական բացի արդյունքում վիճարկվող նորմն իրավակիրառական պրակտիկայում ստանում է այնպիսի մեկնաբանություն ու կիրառում, որով խախտվում է անձի կոնկրետ սահմանադրական իրավունքը, վիճարկվող դրույթը նպատակահարմար է ճանաչել Սահմանադրությանը հակասող, սակայն չճանաչել այն անվավեր՝ հետաձգելով այդ դրույթի իրավաբանական ուժը կորցնելը: Այդ դեպքում մինչև դրույթի իրավաբանական ուժը կորցնելը այն կհամարվի Սահմանադրությանը համապատասխանող:

26. Վիճարկվող դրույթի և Սահմանադրության միջև օրենսդրական բացի առկայությամբ պայմանավորված հակասությունը վերացնելու հարցն անհրաժեշտ է լուծել սահմանադրական դատարանի կողմից դրույթի իրավաբանական ուժը կորցնելու ողջամիտ ժամկետներ սահմանելու միջոցով, որի ընթացքում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեցող սուբյեկտների ջանքերով օրենսդիրը պետք է լրացնի իրավական կարգավորման բացը: Տվյալ դեպքում, կարծում ենք, որ նպատակահարմար է որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու ժամկետ սահմանել օրենքի հիման վրա օրենսդրական բացը վերացնող իրավական կարգավորման ուժի մեջ մտնելու պահը՝ անհրաժեշտության դեպքում սահմանելով նաև ուժը կորցնելու վերջնաժամկետ<sup>15</sup>:

**III. Վիճարկվող իրավանորմի մեկնաբանությունը անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար**

<sup>14</sup> Ասվածի վառ օրինակ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ՀՀ Սահմանադրության 18-րդ (1-ին մաս) և 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ 03.02.2009թ. ՄԴՈ-787 որոշումը, որի հրապարակումից մինչ օրս սահմանադրական դատարանի կողմից արձանագրված օրենսդրական բացը լրացնելու կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովը որևէ գործողություն չի արել:

<sup>15</sup> Տես՝ 2006 թվականի ապրիլի 18-ի սահմանադրական դատարանի թիվ 630 որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետ:

**դատաքննության իրավունքների սահմանափակման (խախտման) տեսանկյունից.**

27. Դիմողի կողմից վիճարկվող նորմի սահմանադրականության հարցն անհրաժեշտ է դիտարկել անձի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքների սահմանափակման (խախտման) տեսանկյունից:

28. ՀՀ Սահմանադրության 18-րդ և Կոնվենցիայի 13-րդ հոդվածները նախատեսում են իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, իսկ ՀՀ Սահմանադրության 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածներով երաշխավորվում է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը:

29. Վերոնշյալ հոդվածների տրամաբանությունից բխում է, որ օրենսդրությունը պետք է մեխանիզմներ նախատեսի անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Այս առումով Կենտրոնն իր մի շարք գրավոր մեկնաբանություններում (եզրակացություններում)<sup>16</sup> նշել է, որ դատական պաշտպանության իրավունքի բովանդակության վերլուծությունից բխում է, որ այն ունի ***երկակի բնույթ***. մի կողմից այն ***անձի՝ հիմնական և անօտարելի իրավունքներից մեկն է***, իսկ մյուս կողմից՝ ***այն հանդես է գալիս որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք***:

30. Ոչ նյութական վնասի փոխհատուցման բացակայության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համադրությունը թույլ է տալիս փաստելու, որ ոչ նյութական վնասի դրամական փոխհատուցման՝ օրենսդրությամբ նախատեսված չլինելն անձին զրկում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից<sup>17</sup>:

31. ՄԻԵԴ-ն արդար դատաքննության իրավունքի պաշտպանության արդյունավետությունը կապում է ***արդար փոխհատուցման հնարավորության*** հետ, ներառյալ՝ բարոյական վնասի փոխհատուցումը<sup>18</sup>:

<sup>16</sup> Տես՝ 02.02.2011թ. թիվ 03-11-Ս, 21.03.2011թ. թիվ 10-11-Ս, 09.12.2011թ. թիվ 30-11-Ս եզրակացությունները:

<sup>17</sup> Case of Poghosyan and Baghdasaryan v. Armenia, 12.06.2012, ap. N 22999/06, §§45-48.

<sup>18</sup> Case of Comingersoll S.A. v. Portugal, 06.04.2000, ap. N 35382/97, §35,

32. Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ վիճարկվող իրավանորմը սահմանափակում է (խախտում է) անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքներն այնքանով, որքանով բարոյական վնասը չի նախատեսում որպես վնասի առանձին տեսակ՝ զրկելով անձին այդպիսի վնասի դրամական փոխհատուցումից:

33. Հատկանշական է, որ 18.05.2010 թվականին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացմամբ նախատեսվեց *«Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները»* վերտառությամբ 1087.<sup>1</sup>-րդ հոդվածը, որը հնարավորություն է ընձեռում զրպարտության և վիրավորանքի դեպքերում ստանալու դրամական փոխհատուցում, որն, ըստ էության, բարոյական վնասի փոխհատուցման դրսևորում է: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկան, բարոյական վնասի ինստիտուտը չպետք է սահմանափակվի միայն նշված դեպքերով, ուստի մինչ օրս պահպանվում է խնդրի ամբողջական օրենսդրական կարգավորման արդիականությունը:

**IV. Ոչ նյութական (բարոյական) վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտը.**

34. Սույն սահմանադրական գործով Կենտրոնն արձանագրում է, որ բարոյական վնաս կրած անձի՝ դրամական փոխհատուցման իրավունքը կարող է լիարժեքորեն իրացվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից բարոյական վնասի դրամական փոխհատուցման դեպքերի, հիմքերի և չափի վերաբերյալ նորմերի՝ օրենսդրության մեջ ամրագրումից հետո: Ըստ այդմ, ստորև ներկայացվում են բարոյական վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտին առնչվող հիմնական հայեցակետերը:

**ա. Բարոյական վնասի հասկացությունը.**

35. Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի տալիս բարոյական վնասի սահմանումը, անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը նշված հարցի կապակցությամբ:

36. Այսպես, Ֆրանսիայում բարոյական վնասը բնորոշվում է *ցավի և տառապանքի, առօրյա կյանքում ժամանակավոր կամ մշտական անհանգստության, զգայական (էմոցիոնալ) տանջանքների* առկայությամբ<sup>19</sup>:

37. Միջազգային իրավունքում բարոյական վնասի դրսևորումներ են ճանաչվում, մասնավորապես, *անձի մտավոր և զգայական տառապանքները, նվաստացումը, սոցիալական դիրքի կորուստը կամ պատվին ու համբավին հասցված վնասը, մասնավոր կյանքի միջամտությամբ պատճառված վնասը*<sup>20</sup>:

38. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ ոչ նյութական (բարոյական) վնասը կարող է արտահայտվել *ցավի, սթրեսի, անհանգստության, հիասթափության*<sup>21</sup>, *անորոշության, անօգնականության*<sup>22</sup> ձևով:

39. Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) քաղաքացիական օրենսգրքի 151-րդ հոդվածով բարոյական վնասը բնորոշվում է որպես *ֆիզիկական կամ բարոյական տառապանքներ*:

40. Հատկանշական է, որ 01.01.1999 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական օրենսգրքում 23.06.97 թվականի լրացմամբ ևս նախատեսված է եղել բարոյական վնասի հատուցումը կանոնակարգող հոդված<sup>23</sup>, որի համաձայն բարոյական վնասը սահմանվել է որպես *ֆիզիկական կամ բարոյական տառապանք*:

#### **բ. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման հիմքը.**

41. Բարոյական վնասի դրամական փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը<sup>24</sup>՝

- բարոյական վնասի առկայություն,
- վնաս պատճառողի արարքի հակաիրավական բնույթ,
- հակաիրավական արարքի և բարոյական վնասի միջև պատճառական կապի առկայություն,

<sup>19</sup>Matthew T. Parish, Annalise K. Newlson, and Charles B. Rosenberg, *Awarding Moral Damages to Respondent States in Investment Arbitration*, 29 Berkeley J. Int'l Law, 2011, 226

<sup>20</sup> Ben Saul, *Compensation for Unlawful Death in International Law: A Focus on the Inter-American Court of Human Rights*, American University International Law Review 19, no. 3, 2003, 547

<sup>21</sup> Case of Poghosyan and Baghdasaryan v. Armenia, 12.06.2012, ap. N 22999/06, §46

<sup>22</sup> Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy, 07.06.2012, ap. N 38433/09, §221

<sup>23</sup> 04.06.1964 թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, Հոդված 7,<sup>1</sup>.

<sup>24</sup> *А. М. Эрделевский, Компенсация морального вреда в России и за рубежом*, М., 1997, стр. 75

- վնաս պատճառողի մեղքի առկայություն<sup>25</sup>:

42. Վերոնշյալ յուրաքանչյուր պայմանի իրավական բովանդակությունը հանգում է հետևյալին:

➤ բարոյական վնասի առկայությունը.

43. Ինչպես արդեն նշել ենք, բարոյական վնասի հասկացությունը քննարկելիս, առավել ընդհանրական մոտեցման համաձայն, բարոյական վնասն իրենից ներկայացնում է ֆիզիկական և/կամ հոգեկան տառապանքներ:

44. Սակայն, այստեղ անհրաժեշտ է պարզելու, թե արդյո՞ք ամեն հակաիրավական արարք ինքնին պատճառում է անձին նաև բարոյական վնաս: Այս առումով Էրդելևսկին առաջ է քաշում **բարոյական վնասի կանխավարկածի** սկզբունքը, համաձայն որի՝ ցանկացած ֆիզիկական անձ, ում նկատմամբ իրականացվել է հակաիրավական արարք՝ գործողություն կամ անգործություն, համարվում է բարոյական վնաս կրած, եթե այդ գործողությունը կամ անգործությունը կատարած անձը չի ապացուցում հակառակը<sup>26</sup>:

45. Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը բարոյական վնասի կանխավարկածի սկզբունքը սահմանափակել է ծանր հանցագործություններով՝ նշելով, որ այդպիսի հանցագործություններից տուժած յուրաքանչյուր անձի ինքնին հասցված է նաև բարոյական վնաս, ուստի եթե նման հանցագործություններ կատարած անձի մեղավորությունն ընդունված կամ հաստատված է, ապա բարոյական վնասի գոյության մասին ապացույցներ չեն պահանջվում: Ծանր հանցագործությունները ներառում են, ի թիվս այլոց, սպանությունները, ազատությունից ապօրինի զրկելը, խոշտանգումները<sup>27</sup>:

➤ վնաս պատճառողի արարքի հակաիրավականությունը.

46. Արարքի հակաիրավականությունն առկա է, եթե վնաս պատճառողի գործողությունները կամ անգործությունը հակասում են իրավունքի նորմերին: Որպես կանոն՝ հակաիրավական արարքը բարոյական վնասի փոխհատուցում պահանջելու իրավունք է ծնում, եթե այդ արարքի

<sup>25</sup> Բացառություն են կազմում օրենքով նախատեսված այն դեպքերը, երբ բարոյական վնասի փոխհատուցումն իրականացվում է անկախ վնաս պատճառողի մեղքի առկայությունից:

<sup>26</sup> *А.М. Эрделевский, Моральный вред и компенсация за страдания*, Науч.-практ. пособие., М., Бек, 1997, стр. 16–17

<sup>27</sup> Ben Saul, *Compensation for Unlawful Death in International Law: A Focus on the Inter-American Court of Human Rights*, American University International Law Review 19, no. 3, 2003, 556

արդյունքում խախտվում են անձի ոչ գույքային իրավունքները: Այն ժամանակ, երբ հակաիրավական արարքի արդյունքում խախտվում են անձի գույքային իրավունքները, բարոյական վնասի փոխհատուցման իրավունքը ծագում է օրենքով հատուկ նախատեսված լինելու դեպքում<sup>28</sup>:

➤ հակաիրավական արարքի և բարոյական վնասի միջև պատճառական կապի առկայությունը.

47. Հակաիրավական արարքի և բարոյական վնասի միջև պատճառական կապի էությունը կայանում է նրանում, որ բարոյական վնասի հատուցման իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ է, որ անձի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքներն առաջանան հակաիրավական արարքի արդյունքում, լինեն դրա հետևանքը:

➤ վնաս պատճառողի մեղքի առկայությունը.

48. Որպես կանոն՝ բարոյական վնասի փոխհատուցման իրավունքի առաջացումը պայմանավորված է նաև հակաիրավական արարք գործած անձի մեղքի առկայությամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում դրամական փոխհատուցման իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ չէ ապացուցել իրավախախտի մեղքի առկայությունը, օրինակ, երբ վնասը քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված է առավել վտանգի աղբյուրով<sup>29</sup>:

**գ. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափը.**

49. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտի առանցքային հայեցակետերից է նաև վնասի փոխհատուցման չափի որոշման հիմնախնդիրը:

50. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում առկա են բարոյական վնասի չափը հաշվարկելու տարբեր չափանիշներ և եղանակներ: Ստորև Կենտրոնը կքննարկի առավել տարածված չափանիշները:

ա. Հանգամանքներ, որոնք կարող են ազդել բարոյական վնասի հատուցման չափի վրա.

<sup>28</sup> *А.М. Эрделевский, Компенсация морального вреда в России и за рубежом*, М., 1997, стр. 77-78

<sup>29</sup> ՌԴ քաղաքացիական օրենսգիրք, 1100-րդ հոդված:

51. Այսպես, ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը (151-րդ և 1101-րդ հոդվածներ) թվարկում է այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափը որոշելիս: Դրանք են՝

- տուժողի տառապանքների բնույթը,
- տուժողի տառապանքների աստիճանը՝ կապված անձի անձնական առանձնահատկությունների հետ,
- վնաս պատճառողի մեղքի աստիճանը,
- բանականության և արդարության պահանջները,
- ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

52. Տառապանքների բնույթը հաշվի առնելիս դատարանը պետք է գնահատի կոնկրետ այն ֆիզիկական և հոգեկան տառապանքների դրսևորումները, որոնք վկայակոչում է տուժողը:

53. Ֆիզիկական և հոգեկան տառապանքների աստիճանը բնութագրվում է այդ տառապանքների խորությամբ: Տառապանքների խորությունը կախված է այն ոչ նյութական բարիքի բնույթից, որին պատճառվել է վնասը, իսկ տուժողի անձնական առանձնահատկությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել այդ տառապանքները<sup>30</sup>:

54. Տուժողի անձնական առանձնահատկությունները տեսության մեջ դասակարգվում են հոգեբանականի և ֆիզիկականի:

55. Հոգեբանական առանձնահատկությունները ներառում են տուժողի՝

- հուզականության աստիճանը,
- հոգեբանական խոցելիության աստիճանը,
- ինքնագնահատականի աստիճանը,
- հոգեկանի առանձնահատկությունները,
- ինտելեկտի զարգացման մակարդակը և այլն:

56. Ֆիզիկական առանձնահատկություններն ընդգրկում են տուժողի՝

- ֆիզիկական զարգացման աստիճանը,
- սեռը,
- տարիքը,
- ցավին դիմադրելու կարողությունը<sup>31</sup>:

<sup>30</sup> *Օ.Վ. Кузнецова, Возмещение морального вреда*, М., Юстицинформ, 2009, ст. 51.

<sup>31</sup> *Օ.Վ. Кузнецова, Возмещение морального вреда*, М., Юстицинформ, 2009, ст. 57-58.

57. Ամեն դեպքում, փոխհատուցման չափը որոշելու անհրաժեշտ չափանիշ պետք է դիտարկել անձի տառապանքների միջին խորությունը, ինչը բնութագրվում է այնպիսի տառապանքներով, որոնք, ընդհանուր պատկերացումների համաձայն, պետք է առաջանան և չեն կարող չառաջանալ սովորական մարդու մոտ, ում նկատմամբ կատարվել է հակահրավակյան արարքը<sup>32</sup>:

58. Վնաս պատճառողի մեղքի աստիճանը պետք է հաշվի առնել այն դեպքերում, երբ մեղքի առկայությունը համարվում է բարոյական վնասի դրամական փոխհատուցման հիմք: Բարոյական վնասի փոխհատուցման չափն ավելի մեծ պետք է լինի, երբ առկա է վնաս պատճառողի դիտավորությունը:

59. Բանականության և արդարության պահանջները հաշվի առնելը ենթադրում է այնպիսի մոտեցում, համաձայն որի՝ կսահմանվի բարոյական վնասի դրամական փոխհատուցման ողջամիտ չափ՝ կոնկրետ գործի առանձնահատկություններից ելնելով:

60. Ուշադրության արժանի այլ հանգամանքների շարքին կարելի է դասել վնաս պատճառած անձի զոջալը և վնասը փոխհատուցելու պատրաստակամությունը (այսպես կոչված «գործուն գղջալու» դեպքերը):

61. Վնասների հատուցման ինստիտուտի տրամաբանությունից է բխում որպես բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի որոշման չափանիշներ հաշվի առնել նաև

- տուժողի մեղքի աստիճանը<sup>33</sup>,
- վնաս պատճառողի գույքային դրությունը<sup>34</sup>:

52. Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի հետ կապված նշում է, որ այն պետք է հիմնված լինի արդարության սկզբունքի և յուրաքանչյուր գործի առանձնահատկությունների վրա: Դատարանը պետք է նշանակի

<sup>32</sup> *А.М. Эрделевский, Компенсация морального вреда в России и за рубежом*, Москва, 1997, ст. 129.

<sup>33</sup> Դատարանի կողմից պարտադիր գնահատականի արժանի չափանիշ է (А. М. Эрделевский, *Компенсация морального вреда в России и за рубежом*, Москва, 1997, ст. 137).

<sup>34</sup> Չափանիշի կիրառումը դատարանի հայեցողությանն է թողնված (А. М. Эрделевский, *Компенсация морального вреда в России и за рубежом*, Москва, 1997, ст. 137).



փոխհատուցում բարոյական վնասի շրջահայաց գնահատման հիման վրա, այլ ոչ թե բացարձակ կանոնի կամ ճշգրիտ գնահատման<sup>35</sup>:

53. Նեյրա Ալեգրիայի գործով Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը նշում է, որ բարոյական վնասի հետ կապված դատարանը չպետք է կաշկանդված լինի նախադեպերով, և տվյալ գործի յուրաքանչյուր առանձնահատուկ հանգամանք պետք է հաշվի առնվի<sup>36</sup>:

բ. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի որոշման եղանակները.

54. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափը որոշելու եղանակներից մեկն օրենքով բարոյական վնասի փոխհատուցման առավելագույն և նվազագույն չափեր սահմանելն է՝ կախված հակաիրավական արարքի բնույթից: Տվյալ դեպքում յուրաքանչյուր գործով դատարանի հայեցողությանն է թողնված փոխհատուցման կոնկրետ չափի որոշումն օրենքով սահմանված շրջանակներում:

55. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափը որոշելու համար տեսության մեջ առաջարկվում են նաև տարբեր բանաձևեր:

56. Այսպես, Վ. Կապշարի մոտեցման համաձայն՝ կարելի է կիրառել  $C_M = T\Phi \times K \times Tc$  բանաձևը, որտեղ՝

$C_M$ -ն բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափն է,

$T\Phi$ -ն հայցվորի կողմից ընդհանուր ծախսված ժամանակն է՝ արտահայտված օրերով (ծախսված ժամանակը ներառում է մինչդատական աշխատանքի վրա ծախսված ժամանակը (փաստաթղթեր հավաքել և այլն), գործի փաստաթղթերի, նորմատիվ ակտերի ուսումնասիրման վրա ծախսված ժամանակը, դատական քննության փուլում ծախսված ամբողջ ժամանակը, տրանսպորտով երթևեկության վրա ծախսված ժամանակը և մինչև վճռի կատարումը դատական ակտերի հարկադիր կատարողների հետ շփման արդյունքում ծախսված ժամանակը),

$K$ -ն իրավիճակի բարդության գործակիցն է, որը կարող է ընդունել 1-ից 3 արժեքը (այն որոշվում է հայցվորի կողմից և հետագայում կարող է փոփոխվել դատարանի կողմից),

$Tc$ -ն տարիֆային դրույքն է, որը որոշվում է հետևյալ կերպ՝

<sup>35</sup> *Ben Saul, Compensation for Unlawful Death in International Law: A Focus on the Inter-American Court of Human Rights*, American University International Law Review 19, no. 3, 2003, 558.

<sup>36</sup> Neira Alegria et al. Case, Reparations, Judgment of Sept. 19, 1996, Inter-Am. Ct. H.R. (Ser. C) No. 29, paras. 55-58.

$Tc = 3\pi/Bp$ , որտեղ

$3\pi$ -ն հայցվորի ամսական ամբողջ եկամուտն է (աշխատավարձ, հավելավճարներ, կենսաթոշակ և այլն), իսկ

$Bp$ -ն՝ ամսվա ընթացքում աշխատած օրերի քանակը<sup>37</sup>:

57. Բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափը հաշվելու մեկ այլ տարբերակ է առաջարկում Էրդելևսկին: Ըստ այդմ, փոխհատուցման չափը որոշվում է  $D=d \times fv \times i \times c \times (1-fs)$  բանաձևով, որտեղ՝

$D$ -ն հատկացվելիք բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափն է,

$d$ -ն՝ տուժողի կողմից նշվող բարոյական վնասի փոխհատուցման չափը,

$fv$ -ն վնաս պատճառողի մեղքի աստիճանն է, ընդ որում՝  $0 \leq fv \leq 1$ ,

$i$ -ն տուժողի անհատական առանձնահատկությունների գործակիցն է, ընդ որում՝  $0 \leq i \leq 2$ ,

$c$ -ն ուշադրության արժանի հանգամանքների գործակիցն է, ընդ որում՝  $0 \leq c \leq 2$ ,

$fs$  -ն տուժողի մեղքի աստիճանն է, ընդ որում՝  $0 \leq fs \leq 1$ <sup>38</sup>:

58. Կան երկրներ, որոնք բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի հարցը կարգավորել են սանդղակների (աղյուսակների) միջոցով<sup>39</sup>: Այդպիսի սանդղակներով, կոնկրետ դեպքով պայմանավորված, նախատեսված է բարոյական վնասի դրամական փոխհատուցման ֆիքսված չափ:

### Եզրակացությունը.

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնն արձանագրում է, որ վիճարկվող իրավանորմը սահմանափակում է (խախտում է) անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքներն այնքանով, որքանով բարոյական վնասը չի նախատեսում որպես վնասի առանձին տեսակ՝ զրկելով անձին այդպիսի

<sup>37</sup> *Владимир Капшарь, Оценка морального вреда в денежном выражении, Налоговые и финансовые известия Кубани, 25.07.2010, стр. 56-57.*

<sup>38</sup> *А. М. Эрделевский, Компенсация морального вреда в России и за рубежом, Москва, 1997, стр. 137-138:*

<sup>39</sup> [http://ec.europa.eu/justice\\_home/judicialatlascivil/html/pdf/national\\_law2\\_cv\\_uki\\_en.pdf](http://ec.europa.eu/justice_home/judicialatlascivil/html/pdf/national_law2_cv_uki_en.pdf) (Մեծ Բրիտանիա),  
[http://intra.intereuropeag.com/download/konferenz3\\_regional/backu\\_praesentation\\_eng.pdf](http://intra.intereuropeag.com/download/konferenz3_regional/backu_praesentation_eng.pdf) (Բելգիա):

վնասի դրամական փոխհատուցումից:

Վերոնշյալ խախտումը վերացնելու տեսանկյունից Կենտրոնը կարևորում է ոչ նյութական (բարոյական) վնասի պատշաճ օրենսդրական կարգավորումը, որը ենթադրում է ինչպես «ոչ նյութական (բարոյական) վնաս» հասկացության օրենսդրական ամրագրում, այնպես էլ բարոյական վնասի դրամական փոխհատուցման հիմքերի և հատուցման ենթակա գումարի չափը հաշվարկելու մեխանիզմների նախատեսում:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան